

**ՀԱՅԿԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ
ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ
(ԺԷ.-ԺԹ. դդ.)**

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ
norayr.poghosyan@ysu.am

ՄՈՒՏՔ

Գիտական ու նաեւ գեղարուեստական գրականության մէջ յաճախակի կարելի է հանդիպել «հայկաբան» եւ «հայկաբանութիւն» եզրերին: Ընդ որում դրանով առաւելապէս բնութագրում են ժԺ. դարի հայերէնագիտութիւնը եւ հայագէտ դասաւանդողները: Ժամանակի հայ բանասէրներն ու հայկաբաններն այս եզրերը գործածել են առանց դրանք սահմանելու եւ բնութագրելու: Յետահայեաց կերպով մենք փորձել ենք վերհանել հայկաբանութեան բնութագիրը, ներկայացնելով, թէ ինչ էին պատկերացնում հնում հայ գրագէտները «հայկաբան» եւ «հայկաբանութիւն» ասելով:

Ա.

Հայկաբանութիւն եզրը չկայ գրաբարի Նոր Հայկագեան եւ Առձեռն բառարաններում: Դա նշանակում է, որ մեր հին ու միջնադարեան մատենագրութեան մէջ այն պարզապէս չի գործածուել եւ գուցէ բառը ստեղծուած չի եղել: Այն հանդիպում ենք ուշ շրջանի բառարաններում, ինչպէս օրինակ՝ Ստեփանոս Մալխասեանցի Հայերէն Բացարարական Բառարանն ունի հետեւեալ բառայօդուածը. «Հայկաբանութիւն. ընտիր հայերէն (գրաբար) լեզու»: Յայտնի է, որ Մալխասեանցն իր քաղաժ բառերի աղբիւրները չի նշում, ուստի չենք կարող ասել, թէ որտեղից է վերցրել այդ բառը: Իսկ որպէս բառագործածութեան նմուշ բերում է հետեւեալը. «Եզնիկի «Եղծ Աղանդոց» գիրքը ճանաչուած է հայկաբանութեան տիպար» են.²: Հայկական Սովետական Հանրագիտարանում հետեւեալն է եզրի բնութագիրը. «Հայկաբանութիւն - Ճիշդ, ընտիր գրաբար՝ զերծ օտարաբանութիւններից (յունաբանութիւն, լատինաբանութիւն), բարբառայնութիւնից, ինչպէս նաեւ գրաբարեան առանձին ճիշդ

արտայայտություն, բառագործում եւ այլն: Ըստ այսմ հայկաբանութեան օրինակներ են Աստուածաշնչի Սահակ-Մեսրոպեան թարգմանութեան, Ագաթանգեղոսի, Եզնիկի եւ այլ երկերի լեզուն»³:

Մեր արձանագրած ամենահին հեղինակը, որ գործածել է այն, Յովհաննէս Հոլով Կոստանդնուպոլսեցին է⁴: Նա իր *Զրույթին Հայկաբանութեան...* աշխատութեան մէջ թէւ եզրը չի սահմանում, բայց նպատակների մասին խօսելիս հայերէնի երեք շերտեր է առանձնացնում եւ նշում. «Հայկական բարբառ գերիս պարունակէ գրեւակս, որոց առաջինն է զուր կանոնաւոր, զոր եւ ի կիր արկին եւ արկանեն արք հմուրք շաղաց քերականութեան եւ համբաւունակք ի մէջ հայկազունեաց, կոչի յարկապէս հայկական: Երկրորդն, որ է շփոթուն եւ անկանոն, որով եւ վարին արք անտեղեակք գրոց, կոչի աշխարհական: Իսկ երրորդն, որ է խառնեցեալ ի յերկրցունցն, այսինքն՝ ի հայկականէ եւ յաշխարհականէ, վասն որոյ եւ մասամբ ինչ կանոնաւոր, եւ մասամբ իւրք անկանոն, զոր եւ ի կիր արկանեն արեւնախօսք եւ փաստաբանք, կոչի քաղաքական»⁵:

Հոլովն իր տեսական աշխատութիւններում ծրագրային կերպով ներկայացնում է հայերէնի (իր ժամանակի համար՝ բնականաբար գրաբարի) զտման՝ օտարաբան, լատինաբան ազդեցութիւնից զերծ լեզուական որակ ստանալու հարցադրումը, ըստ որի՝ հայերէնի քերականութիւնը պէտք է բխեցնել նրա ներքին առանձնայատկութիւններից, եւ ոչ թէ լատինական կառոյցների վրայ «ծել» մեր լեզուն, հենց դա է յուշում Հոլովի գրքի վերնագիրը՝ *Զրույթին Հայկաբանութեան*: Ընդհանուր առմամբ նոյն մտայնութիւնն ունեն ԺԷ. դարի այլ քերականներ եւս՝ Ոսկան Երևանցին, Սիմէոն Զուղայեցին, Յովհաննէս Մրցուրը: Այսինքն՝ ի սկզբանէ հայկաբանութիւնն ի յայտ է եկել գրաբարը լատինաբանութիւնից զերծ պահելու, քերականական խորթ ձեւերը մէկդի դնելու եւ քերականական իրողութիւնները սահմանելիս հայերէն բուն լեզուական փաստերի վրայ յենուելու նպատակադրումով: Սա հայկաբանութեան առաջին դրսեւորումն է, որ հանդիպում ենք գիտական երկերում ԺԷ. դարից ի վեր:

Մխիթար Սեբաստացին *Քերականութիւն Գրաբարոյի Լեզուի Հայկազեան Սեռի*⁶ աշխատութեան մէջ ձգտում է հայերէնը մաքրել լատինաբանութիւններից, ռամկօրէն ձեւերից եւ վերականգնել հին լեզուն, որ գործածում էին Եզնիկը, Եղիշէն, Խորենացին եւ միւս դասական հեղինակները: Դրան էին միտում *Աստուածաշունչի* նոր հրատարակութիւնը⁷, *Հայկազեան Լեզուի Բառգիրքը*⁸: Գրաբարը զտելու գործում որոշակի դեր է կատարել Հայր Աթոսնէս Ասկերեանը, որի *Փիլիսոփայութիւնի* թարգմանութեան տիտղոսաթերթին ուղղակի գրում է՝ «**թարգմանեալ զգուշութեամբ ըստ հայկազեան լեզուիս ռոճոյ**»⁹: Ապա յաջորդեցին Հայր Գաբրիէլ Աւետիքեանի *Քերականութիւն Հայկականը* (1815), Հայր Մանուէլ Զախչախեանի *Բառգիրք Ի Բարբառ Հայ Եւ Իտալական* (1837), հայ բառարանագրութեան պարծանքը՝ Նոր *Բառգիրք Հայկազեան Լեզուին* (1836-37), Հայր Արսէն Բագրատունու *Տարերք Հայերէն Քերականութեան* (1846), *Հայերէն Քերականութիւն Ի Պէտքս Զարգացելոց* (1852) աշխատասիրութիւնները: Հայկաբանութեան՝ դասական գրաբարին նուիրում աշխատութիւնների շարքը շատ երկար կարելի է շարունակել, որոնց շնորհիւ հայագիտութեանը մատուցուեց կանոնների, քերականական կանոնաւոր ու անկանոն ձեւերի, բառագործածութեան, դարձուածային միաւորների հսկայական մի շտեմարան՝ քաղում յատկապէս դասական հայերէնի ընդերքից: Դրանց ամբողջութիւնը ներկայանում է որպէս «հայկաբան» լեզու ԺԸ.-ԺԺ. դդ. գիտնականների համար:

Բ.

ԺԺ. դարի կէսերին հայերէնը մաքրելու, դասական՝ հայկաբան հայերէնն ուսումնասիրելու հարցում մէկ քայլ առաջ գնացին Վիեննայի Մխիթարեան հայրերը: 1832ին Կիւրեղ Երուսաղէմացու *Կոչումն Ընծայութեան* երկի տպագրութեամբ սկիզբ է դրում հին գրականութեան նորովի տպագրութեանը: Գարագաշեան, Գաթըրճեան, Յովնանեան ուսանողների խումբը մատնացոյց է անում, թէ որոշակիօրէն տարբեր որակ ունեն հին երկերի եւ Մխիթարեան Հայրերի նոր ստեղծագործութիւնների գրաբարը: Այդ տարբերութիւնները սկսում են քննել.

շրջանառության մեջ է դրում «ոսկեդարեան հայերէն» հասկացութիւնը, ուրուագծում են նրա սահմանները, քերականական կանոնները, բառամթերքը: Խանդավառ այս շարժումը նկարագրում է Հայր Ներսէս Ակինեանը. «Մխիթարեան վարժարանը վերածուած էր հայկական ճեմարանի, ուր երկրպագող ճեմականները (ուշադրութիւն դարձրէք այս բառին, ոչ թէ ճեմարանական, այլ ճեմական - Ն.Պ.) կը ճեմէին անդադար բանավիճելով դասական մարենագրութեան բառերու, մասնիկերու շուրջը, կը ծափահարէին ընտրելը, կ'անգոսնէին խորանը, կը հիանային դասականին առաւելութիւններուն վրայ, կը զփռէին ընտրելագոյնը ընտրիւն»¹⁰: Որպէս այդ շարժման դրսեւորում՝ պատրաստում է մի ճառ դասական հայերէնով, ուր սովորական դարձած «գերապատիւ, գերապանծ» նոր ստեղծած բառերի փոխարէն գործածում էին «մեծարգոյ եւ մեծապատիւ տէր...»: Այսինքն՝ սկսում են դասական կամ հայկաբան հայերէնի որոշակի առանձնայատկութիւններին կերպարանք տալ:

Միջանի կէտեր ներկայացնենք մխիթարեանների սկզբունքներից. այն, ինչ խորթ է դասական հայերէնին եւ մուտք է գործել յետդասական դարերում, պէտք է մերժել: Այդպիսի մերժելի բառեր են՝ *կենցաղ, հրաշք, գոյակ, քանակ*. բայեր՝ *պատասխանեմ, փառաբանեմ, հեղեղեմ*. ածանցներ՝ *-բար, -պէս, -ական*. բայական մասնիկներ՝ *արտաբերիմ, գերազանցեմ, հակաճառեմ* են.: Այսինքն՝ փորձ էր արւում Ե. դարի մինչեւ 60ականները ստեղծուած երկերից պեղել եւ մատուցել լեզուական օրինաչափութիւններ՝ դրանք հռչակելով իբրեւ հայկաբան կամ դասական հայերէն: Դրանց կիրառմամբ թարգմանում է Բոսուէի *Վասն Տիեզերական Պարմութեան* աշխատութիւնը¹¹: Աւելի առաջ գնալով՝ կազմում է Բանասիրաց Ժողով (Գարագաշեան, Գաթըրճեան, Յովնանեան, Տէրտէրեան), որը պէտք է հսկէր միաբանութեան համար միակ պաշտօնական լեզու յայտարարուած դասական հայերէնի անաղարտ գործածութեանը:

Իրենց ձեռնարկումներում Վիեննայի Մխիթարեան այս հայերը յաճախ ծայրայեղ մօտեցումներ էին դրսեւորում՝ դասական հայերէնի կանոնները յայտարարելով միակ ճիշտը եւ կիրառելին հայերէնի կենսագործունէութեան բոլոր ոլորտներում:

Բայց չնայած դրան՝ նրանց կատարած զտումները մեծ նշանակություն ունեցան հայկաբանության կանոնների մշակման գործում. դրանք արդիական են եւ քննում են նաեւ մեր օրերում:

Այսպիսով կարող ենք մատնանշել հայկաբանության երկրորդ նպատակակետը.- Ե. դարի առաջին շրջանի՝ Մաշտոցի եւ նրա աշակերտների երկերի լեզուական առանձնայատկությունների հիման վրայ վեր հանել դասական (ոսկեդարեան, մաշտոցեան) լեզուն եւ դարձնել միակ ճիշտն ու յանձնարարելին՝ կիրառելին գիտական աշխատություններում եւ դպրոցներում:

Գ.

Հայկաբանության նման ընկալումը յանգեցրեց Ե. դարի գրաբարի կանոնաւորության, բարձրության, վսեմության յատկանիշների վերհանմանը. նման բնութագրումներ յաճախակի ենք հանդիպում գիտական գրականության մէջ: «Կանոնք օրինաւոր դպրութեան անվրէպ նշմարին ի գիրս նոցա, **բանք եւ բարբառք՝ հոյակապք, ընտիր, անեղծք եւ բուն հայկականք**, ամենայն փոփոխմունք անուանց եւ խոնարհմունք բայից միակերպ... նկարագիրք հզօր, քաղցունք, յորդք եւ պերճք»՝ շեշտում է յայտնի հայկաբաններից Հայր Մատթիա Գարազաշեանը¹²: Դասական գրաբարի շրջանում, ճիշտ է, գոյատեւում էին հայերէնի տարածքային տարբերակներ¹³, սակայն դրանք վերաճեցին (կամ նախորդող դարերում բանաւոր մշակմամբ արդէն վերաճել էին) յարաբերաբար մշակուած ու միասեռ լեզուի:

Ե. դարի հեղինակներից բխեցրած առանձնայատկությունները մի առիթով սահմանում է Հայր Արսէն Այտընեանը, երբ գրում է. «Հիմակուան հայկաբանութեան փոյթն եղած է ցուցնել...», որ թարգմանիչների մեծ մասը ձգտել է մեծ ջանքով ու խնամքով «բառերի ընտրութեամբ, արուեստական նրբութեամբ, նոյնանշաններու պէսպիսութեան, կարգի եւ ծեւոց զանազանութեան մտադրութեամբ» լեզուի յատկութիւններ սահմանել եւ պահպանել: Այսինքն՝ բաւական չէ կանոնաւոր, կանոնակարգուած հայերէն գործածել. հայկաբան լեզուն ենթադրում է նաեւ կանոնաւոր լեզուի գեղարուեստականութիւն,

իմաստի եւ ձեւերի ճաշակով կիրառում: Այն, ինչը որ իրապէս գտնում ենք Ե. դարի երկերի մեծ մասում: Դրա շնորհիւ է, որ «ոչ թէ յոյն Ոսկեբերան մըն էր, կամ Սեբերիանոս, կամ Բարսեղ, որ կը խօսէին հայ ականջներուն, այլ հայերէնաշուրթն հեղինակներ էին, որ կը բարբառէին հայ գրով», - շարունակում է բնութագրել Այտընեանը¹⁴:

Գեղարուեստականացման ձգտումը հաւասարապէս առնչւում էր բոլոր սեռերի երկերին՝ գեղարուեստական, պատմական, մեկնողական, հայրաբանական, ծիսական, վկայաբանական են.: Այդպիսով կարելի է տալ հայկաբանութեան երրորդ բնութագիրը.- բաւական չէ, որ հայերէնն ունենայ կանոնաւոր, դասական շրջանին յարիր ձեւ ու բառային կազմ, այն նաեւ պէտք է ունենայ վսեմ ու բարձր ոճի գեղարուեստական դրսետւում: Այս համոզմունքն է դրսետւում օրինակ՝ Հայր Գաբրիէլ Այվազեանի *Խանգարմունք Հայկաբանութեան Ի Հնումն եւ Ի Նորումն* (Թէոդոսիա, 1869), Հայր Յակոբոս Տաշեանի *Ուսումն Դասական Հայերէն Լեզուի* (Վիեննա, 1920) եւ այլ աշխատութիւններում:

Հայկաբանութեանը հենց այդպիսի իմաստ է հաղորդում Ակինեանը՝ գրելով. «Կարելոր է հին լեզուին ուսումը հին մատենագրութենէն՝ նոր լեզուի զարգացման համար, որովհետեւ հոն է շարժարանաւ հայ բարբառին հարստութիւնը, հոն կը յայտնուի հայ ճաշակը իւր նրբութեամբ, հարազատութեամբ, բնիկ ժողովրդական նկարագրով»¹⁵: Այդպիսով հայկաբանութեան եւս մէկ առաքելութիւն.- այն պէտք է ծառայի հայ լեզուի շտեմարանից բարձր ու վեհ ձեւերի վերհանմանն ու տարածմանը, համընդհանուր լեզուական կիրառմամբ լեզուն առաւել գեղեցիկ դարձնելու համար:

Դ.

ԺԺ. դարի երկրորդ քառորդից ի յայտ է գալիս հայկաբանութեան դրսետւումը Հայաստանի բոլոր հատուածներում գտնուող հայ կրթական հաստատութիւններում:

ԺԷ. դարից հայ կրթական ոլորտում մի նոր վերազարթօնքի ալիք էր սկսուել: Դեռեւս 1610ին դպրոց է բացւում Տաթևի Հարանց Անապատում, ապա՝ Յովհաննավանքում, Էջմիածնում,

Երեւանում (այստեղ դպրոցի համար նորոգւում է Ս. Անանիայի մատուռը), Շոռոթում, Ագուլիսում, Աստապատում...: Յովհաննաս վանքի դպրոցը կամ վարդապետանոցը, որ հիմնադրել էր Մովսէս կաթողիկոսը, 15 տարի գոյատեւելուց յետոյ 1640ին Փիլիպպոս կաթողիկոսի կողմից տեղափոխւում է Էջմիածին: Յայտնի էր Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ դպրոցը, որ գոյատեւել է մինչեւ ԺԸ. դարի վերջը: Ի դէպ, այստեղ դասաւանդած Կոստանդ Զուղայեցու գրչին է պատկանում *Յաղագս Վաճառականութեան* դասագիրքը, որ ցայժմ մնում է անտիպ¹⁶: ԺԸ. դարում նոր դպրոցներ են բացւում Կալկաթայում (Յարութին Գալուցեանի «Հայ Եւ Անգլիական Ուսմանց Մասնաւոր Դպրոց»ը), Մադրասում, Ամիդում, Հալէպում, Սեբաստիայում, Կարինում: Ուսումնական այս վերազարթօնքն անխուսափելիօրէն պէտք է ներառէր նաեւ կրթութեան լեզուի ընտրութեան հարցը: Հայ լեզուի վաղ աշխարհաբարեան փուլն ընդգրկող այս շրջանում ի՞նչ լուծում ստացաւ հին ու նոր լեզուների միջից ընտրութիւն կատարելու հարցը: Մենք հարցի պատասխանը դիտարկում ենք հայկաբանութեան դիրքերից:

Նախ պէտք է ասել, որ բոլոր դպրոցներում մեծ տեղ էր գրաւում հայերէնի ուսուցումը, այդ թւում՝ Յարական Ռուսաստանում: Օրինակ՝ Ներսիսեան Դպրոցի առաջին շրջանի (1820-30ականներ) առարկայացանկում ընդգրկուած էր «հայոց լեզու» կամ «հայոց քերականութիւն», «հայերէն» առարկան: Տարբեր տարեթուերին տարբեր մեթոդական, գործնական հայեցակարգեր են ներդրուել, այդ թւում՝ ընթերցանութիւն, հայոց քերականութիւն եւ շարահիւսութիւն, ճարտասանութիւն, վայելչագրութիւն եւն.: Թեմական դպրոցների բոլոր դասարաններում անցնում էին «հայոց լեզու» շաբաթական 5-6 Ժամ դասաքանակով¹⁷: Շատ յաճախ ամէն մի դպրոց ունենում էր իր սեփական ծրագիրը՝ կախուած դասաւանդողից, դասագրքից կամ հաստատութեան ուղղութեանից: Հայերէնի ծրագրերը միասնականացնելու փորձեր ձեռնարկուել են ակելի ուշ՝ Ի. դարի սկզբներին: Այդ ուղղութեամբ քայլերը կատարուել են Էջմիածնում, միասնական ծրագիրը հաստատուել է 1912ին, բայց հիմնականում մնացել է չգործադրուած:

Հետաքրքիր է, որ ցարական շրջանի հայկական դպրոցներում հայերենն ու կրօնագիտությունը կամ հայ եկեղեցու պատմությունը դիտում էին իբրեւ մէկ ամբողջություն եւ դասաւանդողները հիմնականում նոյն անձինք էին լինում¹⁸:

Լազարեան Ճեմարանի նախապատրաստական դասարաններում աշակերտները սովորում էին գրաբարի քերականութիւն, թարգմանութիւններ էին անում գրաբարից աշխարհաբար եւ ռուսերէն: Ընդ որում թարգմանութիւնների ժամանակ պահանջում էր «զգոյշ լինել, որպէսզի օտար լեզուական ռճերը չթափանցեն հայոց լեզուի մէջ»¹⁹, այսինքն՝ գործածուէր դասական կամ «հայկաբան» լեզու: Ճեմարանում հայերէնը նախապէս անցնում էին Հայր Միքայէլ Չամչեանի *Քերականութիւն Հայկազեան Լեզուի* դասագրքով, ապա 1827ից՝ Միքայէլ Սալլանթեանի ստեղծած *Քերականութիւն Գրաբար Լեզուի Հայոց* դասագրքով²⁰: Աւելի ուշ՝ 1846ին, ձեռնարկ է ստեղծում Ճեմարանի հայոց լեզուի և գրականութեան պրոֆեսոր Մկրտիչ Էմինը՝ *Քերականութիւն Հայկազեան Լեզուի*, որով երկար տարիներ սովորում են Ճեմարանի սաները: 1882ին կազմում եւ տպագրում է Ճեմարանի հայոց լեզուի ծրագիրը, նորից էլի հայերէնը կրօնի հետ միակցուած՝ *Ծրագիր Հայոց Լեզուի եւ Կրօնի Դասաւորութեան Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց* (Մոսկուա, 1882):

Պէտք է շեշտել ուրեմն, որ հայերէնը մշտապէս մեծ կարեւորութիւն է ունեցել հայ դպրոցներում, այն երբեւէ ստորադասուած չի եղել անգամ գերիշխող ռուսերէնին: 1873ին Ներսիսեան Դպրոցի տեսուչ Սեդրակ Մանդինեանը առաջարկում է չսկսել օտար լեզուի ուսուցումը, քանի դեռ մայրենին հաստատապէս չի իրացուել: Այսինքն՝ օտարախօսութեան երեւոյթը եւ դրա դէմ քայլերը նկատելի են արդէն ԺԺ. դարից: Նոյն Ներսիսեան Դպրոցը 1892ի ծրագրերի շուրջ սուր բանավէճերից յետոյ այսպիսի բանածեւ է ընդունում. «*Դպրոցը պէտք է մատակարարի միջնակարգ կրթութիւն, բայց գերակշռող նշանակութիւն պէտք է ունենան հայերէն լեզուն եւ կրօնը*»²¹:

Դասաւանդման տեսակէտից հայկաբանութիւնը աղերսում է գրաբար, թէ՛ աշխարհաբար ուսուցմամբ առաջնորդուելու հարցին: Դրա մասին տարբեր կարծիքներ կան: Ըստ Լէոյի,

չնայած աշխարհաբարի համար պայքարն աւարտուել էր եւ 1860ականներին, լոյս էին տեսել աշխարհաբարի քերականութիւններ, սակայն կրթութիւնը գրաբարով էր տարւում ընդիուպ մինչեւ Ի. դարի սկիզբը²²:

Դպրոցներում հայկաբանութեան դրսեւորումներից է հայերէնի մանկավարժ-գիտնականներին տրուող «հայկաբան» մակդիրը: Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում հայկաբանութեան ուսուցիչ է կարգուել Մեսրոպ Թաղիադեանը: Նա Հնդկաստանի Սանդխտեան Դպրոցում դասաւանդել է նաեւ բառագիտութիւն ըստ իր հեղինակած *Մեսրոպեան Այբբենարանի*, նաեւ Չամչեանի քերականութեան առաջին մասը, այսինքն՝ ուսումը եղել է գրաբարով: Առաջին հայկաբան ուսուցիչներից յիշատակւում է նաեւ Պօղոս վարդապետ Ղարաբաղցին, որ եղել է Ստեփանոս Նազարեանցի, Թաղիադեանի ուսուցիչը, եւ որին Նազարեանը այսպէս է բնութագրում. «*Պօղոս վարդապետը կարող էր միմիայն մեքենայաբար ուսուցանել, առանց կենդանացնելու իւր դասաւարտութիւնը հին մեռեալ հայկաբանութեան մասին*»²³: Դատելով գրական երկերում եւ յուշերում պահպանուած նման դրուագներից՝ դպրոցներում հայկաբան էին կոչում յատկապէս հայերէնի գերազանց իմացութեամբ, գրաբարի քննութեամբ եւ դասաւանդմամբ զբաղուող մասնագէտներին:

Արեւելահայ իրականութեան մէջ յայտնի հայկաբաններից էր Ռոստոմ Երզնկեանը, որ 1843-46՝ եղել է Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցի հայկաբանութեան եւ պատմութեան ուսուցիչ, իսկ յետոյ անցել է ռազմական ծառայութեան: ԺԹ. դարի աւարտին յայտնի հայկաբան էր Կարապետ Կոստանեանցը: Նրա դասագրքերով - ինչպէս՝ *Նախաշաւիղը*²⁴, *Ծաղկաքաղ Արծակ եւ Չափածոյ Բանիցը*²⁵ - երկար տարիներ հայերէն է դասաւանդուել Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում: Այս դասագրքերը գրաբարի ուսուցման գործնական եւ քերականական հմտութիւնների միակցում էին: Դրանց նպատակն էր՝ դասական շրջանի մատենագրական նիւթի հիման վրայ սովորեցնել գրաբարը, հոլովման եւ խոնարհման յարացոյցերը, թարգմանել բնագրերը եւն.: Պէտք է ասել, որ նշուած բոլոր դէպքերում «հայկաբան» տիտղոսը տրւում էր աւանդոյթի ուժով, մինչ ուսումնական հաստատութիւնների

հաստիքացուցակներում «հայկաբան» դասատու որեւէ տեղ չենք հանդիպել:

Նման բնութագիրը հիմք է տալիս ասելու, որ ուսումնական հաստատություններում հայկաբանության դրսևորում է համարուել հայեցի կրթութեան իրագործումը, որով կարելուում էր դասական հայերէնը՝ գաւառական կամ բարբառային կամ խօսակցական չմշակուած լեզուի փոխարէն:

Հայկաբանութեան սահմանումը ներառում է նաեւ ԺԺ. դարի գրապայքարի արծագանգները, այն առումով, որ աշխարհաբարի կողմնակիցների մի մասը նոր լեզուն դիտում էր որպէս գրաբարին հասնելու միջանկեալ միջոց (նման հայեցակարգը խորթ չէր նաեւ Խաչատուր Աբովեանին), եւ ոչ թէ ինքնին պաշտպանում էին աշխարհաբարի շահերն ընդդէմ գրաբարի, քանզի չէր կարող (եւ թերեւս այժմ էլ չի կարող) որեւէ հայ գրագէտ գրաբարը ստորադասել կամ հակադրել աշխարհաբարին:

Հայկաբանութիւն եզրը աշխարհաբարի պաշտպանների եւ յատկապէս նրանց առաջամարտիկ Նազարեանցի մօտ գործածում է նոր իմաստատումամբ: Այստեղ ի յայտ է գալիս մի նոր ըմբռնում. հայկաբանութիւնը դառնում է բնութագիր կանոնակարգուած, ճշգրիտ աշխարհաբարի համար, որը գերծ է բարբառային տարածեութիւններից եւ առհասարակ բարբառայնութիւնից: Իբրեւ նման լեզուական նմուշ Նազարեանցը գրում է (կամ թարգմանում) հսկայ մի աշխատութիւն՝ *Հանդէս Հայախօսութեան*, ուր հեղինակը հանդէս է գալիս կենդանի լեզուի՝ աշխարհաբարի հիմնաւորումներով: Գիրքը աշխարհաբարի նոր որակ է, մասամբ յայտնի է *Հիւսիսափայլի* լեզուից, ուր անխտիր բոլոր քերականական եւ շարահիւսական ձեւերը բերուած են միօրինակութեան, այդ թւում՝ *նորա, րեսանումէ* (օժանդակ բայը գրում էր դերբային միացած), *ծայրերովը* (որոշեալ յօդ հոլովածեւերի վրայ) եւն.²⁶:

Ե.

Բազմաթիւ գրական յուշեր են պահպանուել հայկաբանութեան մասին: Յակոբ Պարոնեանը *Հոսիոսի Ձեռագրերը* երկում գրում է. «Սրոյգ վիճակագրութեան մը

նայելով՝ Պօլսոյ հայերն այսօր ունին երեք հազար չորս հարիւր գինեւրոն, երեք գրավաճառի խանութ, հազար երկու հարիւր պարի դասաւոր, հինգ հայկաբանութեան դասաւոր, երկու հազար զբօսարան, երեք թանգարան, չորս հազար ծրար խաղի թուղթ, հինգ լրագիր»²⁷:

Շիրվանզադէի՝ Րաֆֆին նուիրուած յուշերում մէկ-երկու պատահիկ է պահպանուել, որ հրաշալի բնութագրում է Րաֆֆի ստեղծագործութեան, աշխարհաբարի մշակման բուն ժամանակաշրջանում հին ու նոր լեզուի, դրա մաքրութեան հարցերը. «Ես ցոյց կը փամ իմ լեզուն ծախ ու խոտ քննադատող պարոններին,- ըստ Շիրվանզադէի ասում էր վիպասանն իր մասին,- որ Րաֆֆին էլ գիտէ գրաբար, գուցէ ամէնից լաւ: Այդ մարդիկ չեն ուզում հասկանալ, որ ես իրենցից աւելի եմ հոգում լեզուի մաքրութեան մասին: Ինձ **հայկաբան** չեն համարում եւ կարծում են, որ հայկաբան լինելու համար անպարճառ պէտք է փքուն ոճով գրել: Չեն հասկանում, որ ժամանակակից մտերնագիրը, մանաւանդ վիպասանը չէ կարող Մովսէս Խորենացիի բարբառը գործածել, թէեւ աշխարհաբարի վերածած»: Ապա Շիրվանզադէն իր կողմից յաւելում է. «Մեր գրականութեան մէջ իրենց հափուկորդ գրուածքներով սխալաստիկները Րաֆֆիի հեզնութեան եւ ծաղրի մշտական առարկան էին: Նա վրդովում էր, երբ մէկն ասում էր, թէ այդ մարդիկ հայոց լեզուի պաշտպաններն են: Նա յարձակում էր նոյնպէս եւ այն մարդկանց վրայ, որոնք, յանուն հայկաբանութեան, հալածում են ամէն մի նորամուծութիւն հայոց կենդանի աշխարհաբարի մէջ»²⁸:

Ահա եւ հայկաբանութեան մէկ այլ բնութագրում.- գեղարուեստական գրականութեան մէջ այն կիրառուել է՝ նշելու համար ճոռոմ, փքուն, վերամբարձ ստեղծագործողին եւ նմանատիպ ոճն ու գրուածքը:

Ամփոփելով հայկաբանութեան բնութագրման մեր փորձը՝ պէտք է ասել թէ ԺԷ. դարից ի վեր, որպէս գիտական եզր, գիտական եւ կրթական ոլորտներ մտած հայկաբանութիւնը, իր մէջ ամփոփում է միջանի շերտեր. այն լեզուի եւ դրա ուսուցման մասին պատկերացումների ամբողջութիւնն է, որ

ներառում է դասական հայերէնի առանձնայատկութիւնները գիտականօրէն վերհանելու եւ մշակելու, դրանց հիման վրայ նոր բնագրեր ստեղծելու, հայերէնը եւ յատկապէս գրաբարը կանոնակարգելու, հայերէնի ներքին յատկանիշների հիման վրայ քերականութիւն մշակելու, հայկաբան (օտար ու խօսակցական շերտերից գերծ) հայերէն դասաւանդելու հարցադրումների ամբողջութիւնը:

Հայկաբանութիւնը, փաստօրէն, լեզուագիտական եւ ուսումնական հոսանք է՝ լեզուի (յատկապէս՝ գրաբարի) գործածման ու զարգացման պատկերացումների ամբողջութիւն, որը մեծ չափով մատնանշեց, պայմանաւորեց հայերէնի մաքրման, մշակման, կանոնակարգման, զարգացման հունը: Հայկաբանութիւնն իբրեւ ուղեկից հոսանք մեծ դեր է խաղացել թէ՛ գրաբարի, թէ՛ աշխարհաբարի կատարելագործման հարցում: Իհարկէ՝ մեր մատնանշած հարցադրումները տարրալուծուած են եղել ԺԷ.-ԺԹ. դարերում հայերէնագիտութեան եւ հայ դպրոցի բոլոր ոլորտներում, եւ դրանք բոլորը մէկ՝ «հայկաբանութիւն» եզրի տակ միաւորելը կարող է վիճարկելի լինել: Սակայն իբրեւ ուսումնական եւ լեզուագիտական հոսանք եւ իբրեւ մեր ժողովրդի հոգեւոր ու մշակութային անտրոհելի բաղկացուցիչ՝ այդ հարցադրումները ուղեկցել են ԺԷ.-ԺԹ. դարերի ընթացքում, ուստի կարող ենք վերը նշուած բնութագրումների հիման վրայ միաւորել «հայկաբանութիւն» եզրի տակ:

2.

Եթէ փորձենք «հայկաբան» եզրը մեր մատնանշած բովանդակութեամբ տեղափոխել արդի ժամանակները, ապա պէտք է ասել, որ հայկաբանութիւնը, նշուած ընկալմամբ, կենսունակ է մեր օրերում, եւ վաղ է այն ամբողջովին պատմական եզր կամ պատմաբառ համարել: Դեռեւս շատ անելիքներ կան հայերէնագիտութեան ասպարէզում. հայկաբանութեան, լուծուած չեն դասական հայերէնի սահմանների եւ աղբիւրների ճշգրտման շատ գիտական խնդիրներ, որոնք պէտք է շարունակուեն մեծանուն հայերէնագէտների թողած ժառանգութեան կէտից:

Ուսումնասիրության են սպասում հայագիտական-հայկաբանական շատ հարցադրումներ, որոնցից բերում ենք մի քանի կետ.-

ա) տարբեր հեղինակների ու թարգմանիչների՝ իրենց գաւառներից ու հնարաւոր խօսուածքներից բերած ներդրումը դասական հայերէնի կազմաւորման եւ կանոնակարգման մէջ,

բ) հայերէնի՝ տարբեր ժամանակներում գոյութիւն ունեցած բարբառների ու համաժողովրդական լեզուի փոխարաբերութեան հարցը,

գ) Ս. Գրքի տարբեր զլուխների եւ այլ աշխատութիւնների թարգմանիչների պարզումը՝ յենուելով Ե. դարի յայտնի հեղինակների երկերի լեզուական առանձնայատկութիւնների վրայ (անուանապէս յայտնի են Ե. դարի տասնեակ հեղինակներ՝ սկսած Մաշտոցից ու Պարթեւից, իրենց առաջին աշակերտներից²⁹⁾),

դ) հայերէնի լիակատար՝ բոլոր փուլերի եւ դրսեւորումների ընդգրկումով նոր բառարանի կազմումը, որը կ'ունենայ աւելի քան 250 հազար բառայօդուած:

Հայերէնագիտութեան արդի խնդիրների շարքը կարելի է շարունակել:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ստեփան Մալխասեանց, *Հայերէն Բացարարական Բառարան*, Հրդ. Երրորդ, Հ.-Ո., Հրատ. Հայկական Մատենաշար Գալուստ Կիլիկէական Հիմնարկութեան, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2010, էջ 38:

² Ներկայացնենք «հայկաբանութիւն» եզրը բացատրող բառարանային մի քանի այլ տուեալներ. ա) Պետրոս Վրդ. Ճիզմէճեան, *Հայերէն Աշխարհաբար Լեզուի Լիակարար Բառարան* (Հալէպ, Տպ. Անի Ա. Էքմէքճեան, Հրդ. Բ., 1957)՝ «Հայկաբանութիւն - 1. Հայագիտութիւն, 2. Հայ լեզուին յարուկ նախադասութիւններ, ոճեր, դարձուածքներ»: «Հայկաբան - շար լաւ հայերէն գիտցող»: բ) Ժամանակակից Հայոց Լեզուի Բացարարական Բառարան, խմբ.՝ Գեորգ Ջառուկեան, Հրդ. 3 (ԳԱ Լեզուի Ինստիտուտ, Երեւան, Յակոբ Մեղապարտ Տպ., 1974)՝ «Հայկաբանութիւն - 1. Հայկաբան լինելը, գրաբար լեզուն լաւ իմանալը, 2. (ինք.) Ընտիր գրաբար լեզու»: գ) Էդուարդ Աղայեան, Արդի Հայերէնի Բացարարական Բառարան, Հրդ. 1 (Երեւան, Յակոբ Մեղապարտ Տպարան, 1976)՝ «Հայկաբանութիւն - 1. Ընտիր հայերէն (գրաբար) լեզու, 2. Հայերէնագիտութիւն, 3. Հայագիտութիւն»:

- ³ Հայկական Սովետական Հանրագիտարան, Հտր. 6, Երեւան, Յակոբ Մեղապարտ Տպ., 1980, էջ 167:
- ⁴ ԺԷ. դարի անուանի հայ քերական, թարգմանիչ, հոգեւորական գործիչ Յովհաննէս Հոլով Կոստանդնուպոլսեցին (1635-1691) քերականական ու թարգմանական մի շարք գրքերի հեղինակ է, որոնք տպագրուել են Կ.Պոլսում եւ Վենետիկում: Նրա *Պարզաբանութիւն Հոգեւնոագ Սաղմոսացն* (1687) գիրքը աշխարհաբարի նոր որակ է:
- ⁵ Յովհաննէս Հոլով Կոստանդնուպոլսեցի, *Ջրութիւն Հայկաբանութեան Կամ Քերականութիւն Հայկական*, Հոռմ, Տպ. Ուրբանեան, 1674, էջ 3:
- ⁶ Մխիթար Սեբաստացի, *Քերականութիւն Գրաբառի Լեզուի Հայկազեան Սեռի*, Վենետիկ, Տպ. Բատիստա Ալբրիցի Ջերոլիմոյի, 1730:
- ⁷ *Աստուածաշունչ Գիրք Հնոց եւ Նորոց Կրակարանաց*, Հրատ. Մխիթար Սեբաստացու, Վենետիկ, Տպ. Անտոնի Բորտոլիի, 1733:
- ⁸ Մխիթան Սեբաստացի, *Բառգիրք Հայկազեան Լեզուի*, Հրտ. Ա.-Բ, Վենետիկ, Տպարան Անտոնի Բորտոլիի, 1749-1769:
- ⁹ Անտոն Կովդին, *Փիլիսոփայութիւն*, թարգմ. Վրթանէս Ասկէրեանի, Հրտ. Ա, Վենետիկ, Տպ. Ստեֆանօ Օրլանդոյի, 1750:
- ¹⁰ Հ. Ներսէս Ակինեան, *Դասական Հայերէն եւ Վիեննական Մխիթարեան Դպրոցը*, Վիեննա, Տպ. Մխիթարեան, 1932, էջ 143:
- ¹¹ *Բոսուեայ Եպիսկոպոսի Խօսք Վասն Տիեզերական Պարմութեան*, թարգմ.՝ Յովհաննէս Մուրատեանց, Վիեննա, Տպ. Ի Վանս Պ.Ս. Աստուածածնի, 1841:
- ¹² Հ. Մատաթիա Գարազաշեան, *Նկարագիր Ուսմանց*, Վիեննա, Տպ. Պաշտպան Ա.Աստուածածնի Վանքի, 1845, էջ 28:
- ¹³ Ե. դարի եւ յետագայի գրաբարում խօսակցական տարբերակների գոյութեան մասին պահպանուել են մատենագրական քաղմաթիւ փաստեր (Նորայր Պօղոսեան, «Սուրբ Գրքի Բարբառային եւ Աշխարհաբարեան Պատառիկներ», *Էջմիածին*, 2011, թիւ Ա.):
- ¹⁴ Արսէն Այտընեան, *Քննական Քերականութիւն Աշխարհաբար Կամ Արդի Հայերէն Լեզուի*, Վիեննա, Տպ. Մխիթարեան, 1867, էջ 52:
- ¹⁵ Ակինեան, *Դասական Հայերէնը*, էջ 53:
- ¹⁶ Մաշտոցեան Մատենադարանի թ. 5994 եւ այլ ձեռագրերը:
- ¹⁷ Լէօ, *Պարմութիւն Դարաբառի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրոցի (1838-60 թթ.)*, Թիֆլիս, Տպ. Ն. Աղանեանի, 1914, էջ 443:
- ¹⁸ Տե՛ս օրինակ՝ Մուշեղ Սանթրոսեան, *Արեւելահայ Դպրոցը XIX Դարի Առաջին Կէսին*, Երեւան, Տպ. Հայպետումանկիրատ, 1964, էջ 85:
- ¹⁹ Արտուազդ Իգնատեան, *Լազարեան Ճեմարան*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1969, էջ 40:
- ²⁰ Միջայլէ Սալլանթեանց, *Քերականութիւն Գրաբար Լեզուի Հայոց*, Տպ. Օգոստոս Սեմեի, Մոսկուա, 1827: Յետագայում Սալլանթեանցը այս դասագրքի հիման վրայ ստեղծեց համառոտ տարբերակը՝ *Համառոտութիւն Փոքր Քերականութեան Գրաբար Լեզուի Հայոց*, որ տպագրուեց Շուշիում 1833ին:

- ²¹ Մուշեղ Ասնթրոսեան, *Ներսիսեան Դպրոցի Պարմութիւն*, Երեւան, Տպ. Լոյս, 1981, էջ 49:
- ²² Լէօ, էջ 204:
- ²³ «Մահացուցակ», *Հիսիսափայլ*, 1858, N 2, էջ 144:
- ²⁴ Կարապետ Կոստանեանց, *Նախաշափոյ*, Վաղարշապատ, Տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1905:
- ²⁵ Կարապետ Կոստանեանց, *Ծաղկաբաղ Արծակ եւ Չափածոյ Բանից*, Մոսկուա, Տպ. Զ. Բարխուդարեանի, 1915:
- ²⁶ Տե՛ս՝ Ստեփաննոս Նազարեանց, *Հանդէս Հայախօսութեան*, Մոսկուա, Տպ. «Լազարեանց քաջափայլ պարոններ», 1857:
- ²⁷ Յակոբ Պարոնեան, «Հոսիսի Ձեռատետրը», *Երկեր*, թ. 1 տպարան, Երեւան, 1954, էջ 335:
- ²⁸ *Բաֆֆին Ժամանակակիցների Յուշերում*, քնագրերը պատրաստեց եւ ծանօթ. խաչիկ Սամուէլեան, խմբ.՝ Պիոն Յակոբեան, Երեւան, ԳԱ Հրատ., 1986:
- ²⁹ Հայագիտութեան մէջ Մեսրոպ-Սահակի աշակերտների ու հետետորդների գործունէութիւնը ոչ-ամբողջութեամբ է քացայայտուած: Արդէն Ե. դարի աղբիւրներում պահպանուել են մօտ 30 անուն.- *Յովհան Եկեղեցացի, Յովսէփ Պաղնացի, Յովսէփ Հողոցմեցի, Եզնիկ Կողբացի, Կորիւն, Արծան Արծրունի, Ղեւոնդ Վանանդեցի, Տիրայր Խործենացի, Մուշէ Տաթևեցի, Տէր Կայենացի, Մուշէ Արծրունի, Անանիա Սիւնեցի, Դանան Եկեղեցացի, Ենովք Սպերցի, Մուշեղ Բալասական, Յովնաթան Սիւնի, Բենիամին Աղուանցի, Սամուէլ Տաշրացի, Գնիթ Դերջանցի, Տիրուկ Զարիշարցի, Աղան Արծրունի, Երեմիա Վաղարշապարցի, Թաթիկ Բասեցի, Սահակ Ռշտունի, Մուշէ Աղբակեցի, Գիւր, Եղիշէ, Մովսէս Խորենացի, Դաւիթ Ներգինացի Անյաղթ:*

THE PERCEPTION OF "HAYKABANUTYUN" IN THE
ARMENIAN SCIENTIFIC AND EDUCATIONAL SPHERES
(17-19TH CENTURIES)

(Summary)

NORAYR POGHOSYAN

nomor@mail.ru

The term "Haykabanutyun" often come across in scientific literature and fiction. The concept of "Haykabanutyun", however, hasn't been defined so far and we cannot explain what did Haykabanutyun/Haykaban specifically mean.

The author tackles this concern in this article, based on diverse dictionaries and other sources. He argues that though the term maintained a broad sense, it was used with various connotations in different periods and by different scholars.

Eventually, he combines the diverse sets of meanings and presents the reader with some of its characteristic objectives. –

a. to prevent the Armenian language from the impact of Latin and maintain its purity.

b. to use only the 5th century classic Grabar (Old Armenian) words, and grammatical expression.

c. to make the Armenian language more perfect and artistic based on the 5th century linguistic achievements.

d. to spread Armenian education in educational institutions.

e. to avoid the influence of other languages and dialects on the Armenian language.

Those who had adopted such a policy were called 'Haykaban's.